ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/105/22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «03» նոյեմբեր 2022թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), մասնակցությամբ Հանձնաժողովի անդամներ Հայկուհի Հարությունյանի, Արամայիս Փաշինյանի, Նարեկ Համբարձումյանի, Մարիամ Գալստյանի և Լիլիթ Ալեքսանյանի ուսումնասիրելով ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի ավագանու անդամ Տիգրան Վահանի Իվանյանի կողմից 2021 թվականի գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի տարեկան հայտարարագիրը չներկայացնելու կապակցությամբ 2022 թվականի հոկտեմբերի 11-ին կազմված վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/117/22 արձանագրությունը և արձանագրության կազմման համար հիմք հանդիսացած նյութերը, պարզել է, որ.

ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի ավագանու անդամ Տիգրան Վահանի Իվանյանի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված 2021 թվականի գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի տարեկան հայտարարագիրը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չի ներկայացվել:

«Հանրային ծառայության մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձի տարեկան հայտարարագրերը ներկայացվում են մինչև տվյալ տարվան հաջորդող տարվա մայիսի 31-ը:

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 25-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ եթե հայտարարագրերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովը հանգում է եզրակացության, որ հայտարարագիրն օրենքով սահմանված ժամկետում ներկայացված չէ կամ ներկայացված է համապատասխան պահանջների կամ կարգի խախտմամբ, կամ հայտարարագրված տվյալը սխալ է կամ ոչ ամբողջական, ապա հարուցում է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով, 244.17-րդ հոդվածի 1-ին մասով, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 25-րդ հոդվածի 6-րդ մասով, 26-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հարուցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթ:
2. Նշանակել թիվ ՎԻՎ/105/22 գործի քննությունը ***2022 թվականի նոյեմբերի 22-ին, ժամը՝ 12:30-ին***, որին մասնակցության համար Տիգրան Վահանի Իվանյանը կարող է ներկայանալ անձամբ կամ ներկայացուցչի (անձը հաստատող փաստաթղթով, լիազորագրով) միջոցով (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15, 1-ին հարկ):
3. Սույն որոշումը եռօրյա ժամկետում ուղարկել Տիգրան Վահանի Իվանյանին:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**